# Գլխավոր գործընկերոջ և նախագծի գործընկերների առաջադրանքները և պարտականությունները

| Նախագծի փուլ | Գլխավոր գործընկեր, ի լրումն նախագծի գործընկերոջ առաջադրանքների և պարտականությունների | Նախագծի գործընկեր |
| --- | --- | --- |
| *Ծանոթ.՝ նախագծի մտահղացման և մշակման փուլում գլխավոր գործընկեր որոշարկելը պարտադիր չէ:* | | |
| **Ընդհանուր խնդրի կամ հնարավորության վերհանում և ծրագրի մտահղացման մշակում** | Բոլոր գործընկերները տրամադրում են պահանջվող տեղեկությունները, ապահովում են անհրաժեշտ մուտքային տվյալները և հասնում են փոխհամաձայնության: Գործընկերներից մեկը առաջնորդում և վարում է գործընթացը: | |
| **Նախագծի մշակում** | Բոլոր գործընկերներն ակտիվորեն ներգրավված են նախագծի մշակման գործընթացում, ուսումնասիրում են փաստաթղթերի նախագծերը, ներդնում են իրենց երկրի/տարածաշրջանի/տիրույթի վերաբերյալ ունեցած գիտելիքը և տեղեկությունները: Գործընկերներից մեկը գլխավորում է մշակման գործընթացը և կազմակերպում է ժողովներ (դեմ առ դեմ կամ առցանց), ի մի է բերում բոլոր մուտքային տվյալները և ապահովում է ողջ փաստաթղթաշրջանառությունը: | |
| **Հայտադիմումի և պահանջվող հավելվածների փաթեթի կազմում** | Առաջնորդում է գործընթացը, ապահովում է բոլոր անհրաժեշտ մուտքային տվյալների հավաքագրումը, հայտադիմումի պատշաճ լրացումը, բոլոր անհրաժեշտ հավելվածների առկայությունը: | Ակտիվորեն տրամադրում է տեղեկություններ, համաձայնեցնում է իր դերը նախագծում, իր ներդրումը նախագծին (մարդկային և ֆինանսական ռեսուրսների տեսքով), պատրաստում է բոլոր անհրաժեշտ հավելվածները (օրինակ՝ գործընկերության |

| | | |
|---|---|---|
| | | մասին տեղեկանք): |
| **Հայտադիմումի ներկայացում** | Ապահովում է, որ հայտադիմումը ժամանակին ներկայացվի Կառավարման մարմնի/Համատեղ տեխնիկական քարտուղարություն | |
| | ***Եթե նախագծի առաջարկն ընտրվել է ֆինանսավորման համար*** | |
| | **Գլխավոր շահառու, ի լրումն շահառուի առաջադրանքների և պարտականությունների** | **Շահառու** |
| **Պայմանների պահպանում** | Պահպանում է կապը Կառավարման մարմնի/Համատեղ տեխնիկական քարտուղարության հետ, այլ գործընկերների հետ համաձայնեցնելով՝ ներկայացնում է պահանջվող փոփոխությունները, նախապայմանագրային փուլում անհրաժեշտության դեպքում գործընկերության անունից ներկայացնում է փոփոխված հայտերը ի պատասխան պարզաբանումների/պայմանների վերաբերյալ հարցումների | Տրամադրում է պարզաբանումների / պայմանների պահպանման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր |
| **Գործընկերության համաձայնագրի կնքում** | Կազմում է գործընկերության համաձայնագրի նախագիծը, համաձայնագրի բոլոր կետերը քննարկում է նախագծի բոլոր գործընկերների հետ, հասնում է փոխըմբռնման և փոխհամաձայնության, կազմակերպում է համաձայնագրի ստորագրման գործընթացը | Մանրամասնորեն ուսումնասիրում է համաձայնագրի նախագիծը, քննարկում է բովանդակությունը հայտատուի և ծրագրի մյուս գործընկերների հետ, բովանդակության վերաբերյալ համաձայնության դեպքում ապահովում է գործընկերության համաձայնագրի ստորագրումը |

| | | |
|---|---|---|
| **Դրամաշնորհի պայմանագրի կնքում** | Ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրում է Կառավարման մարմնին/Համատեղ տեխնիկական քարտուղարությանը և գործընկերության անունից ստորագրում է դրամաշնորհի պայմանագիրը | Մանրամասն ուսումնասիրում է դրամաշնորհի պայմանագրի բովանդակությունը |
| **Նախագծի իրականացում** | Իրականացնում է նախագծի ընդհանուր համակարգումը, նախագծի գործողությունների իրականացման և ֆինանսական մոնիտորինգը, ապահովում է ծրագրի իրականացման համապատասխանությունը դրամաշնորհի պայմանագրի կետերին, շահառուներից հավաքում է հաշվետվության համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը | Ապահովում է ծրագրի՝ իրենց պատասխանատվության շրջանակի միջոցառումների որակյալ և ժամանակին իրականացումը, տրամադրում է անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, գլխավոր շահառուին տրամադրում է հաշվետվության համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը |
| **Հաշվետվություններ** | Հավաքում է ողջ պահանջվող տեղեկատվությունը, կազմում է հաշվետվությունը և ներկայացնում է Կառավարման մարմնին/Համատեղ տեխնիկական քարտուղարությանը | Տրամադրում է հաշվետվության համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը |
| **Վճարումների հայտի ներկայացում և ստացում** | Կառավարման մարմնին/Համատեղ տեխնիկական քարտուղարությանը ներկայացնում է ծախսերի հավաստման համար պահանջվող հաշվետվությունները, հայտե ներկայացնում և ստանում է վճարումներ Կառավարման մարմնից, վճարումներ է կատարում մյուս շահառուներին | Ըստ համաձայնության ապահովում է ծախսերի հավաստումը, ստանում է վճարումներ գլխավոր շահառուից |